


ՄԻՇՔԻ ԶԵՅԹՈՒՆԱԵԱՆ

# ԳԻՏՈՒԹԻՒՆ

Դ. ՏԱՐԵ



ՄԻԱՅԵԱԼ ԶԵՐՆԱՐԿ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՍԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹՅԻՒ  
ԵՒ  
ՀԱՄԱԳՈՎԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱԾՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՅԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— Բոյսերուն յատկանիշները եւ գործարանները .....	7
2.— Ուժ եւ աշխատանք .....	31
3.— Մարմին, նիւթ եւ մոլեֆիւլ .....	52
4.— Զուրը .....	56
5.— Օղը .....	64
6.— Օդերեւոյք .....	69
7.— Երկրի կազմութիւնը .....	79
8.— Միջատներ .....	81
9.— Անասունները եւ իրենց միջավայրը .....	88
10.— Բրածոններ .....	112
Գործադրէ սորվածներդ (իբրեւ վերաբաղ)	116

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Բնական երեւյթ է աշակերտներուն մօտ խուզաբեկու միտք եւ հետաքրքրութիւն ունենալը իրենց անմիջական շրջապատին հանդէպ: Այս երեւոյթին գոհացում տալու, ինչպէս նաև յդկելու համար անոնց նաշակը, պէտք է զարգացնել զանոնք դիտելու կարողութիւնը եւ ուղղել անոնց միտքը, որպէսզի ընեն նիշդ վերլուծումներ եւ հասնին նիշդ արդինելներու:

Այս նպատակը իրազործելու համար անհրաժեշտ է ունենալ ուսուցման անհրաժեշտ միջոցները, որոնց առաջինը դասագիրքն է, պայմանաւոր դասագիրքերը պատրաստուած ըլլան մանկավարժական աշխատանիքին եւ գիտութեան ծրագրին ամբողջական նպատակներուն գոհացում տալու ձգտումով:

Մեկնելով այս մտահոգութենին՝ այս դասագիրքի պատրաստութեան առքիւ ամէն նիգ ի զործ դրուած է, որպէսզի պարզ ու հասկնալի ըլլալու կողքին՝ ան ըլլայ նաև հանելի, անոր նիւթերը աշակերտին հրամցուին գիտական ու զործնական պարզաբանուած մօտեցումով եւ օծուած ըլլան նոր, ինքնատիպ ու նոխ պատկերազարդումով:

Մանկավարժական վերոյիշեալ նպատակները իրազործելու համար յենած եմ փորձառութեանս, ինչպէս նաև այն գաղափարին, զոր վաստակաւոր ուսուցիչ պրն. Հրաչ Տասնապետեան յայտնած է իր դասագիրքերու շարքին յառաջարանին մէջ, — «Չեն հաւատար տնային աշխատանիքի մը հնարաւորութեան եւ անհրաժեշտութեան՝ 8էն 10 տարեկան տղոց համար, երբ այնքան քնական ու հասկնալի է խաղին պահանջը: Հետազային, նախակրթարաններու վերջին դասարաններուն մէջ, կարելի է աւելի խստապահանջ ըլլալ՝ տնային պատրաստութեան նկատմամբ»:

Այս իրականութենէն ու համոզումէն մեկնելով՝ նիւրին ու-  
սուցման համար նկատի առնուած էն.

— դասին ներկայացումը՝ հարցումներով, որոնք կը համա-  
պատասխանեն մտային կարողութեան.

— տրամաբանութեան զարգացումը, որ կ'իւրացուի բաղ-  
դատուրիւններով եւ փորձերով:

Այս հատորին տասը դասերը կը ներկայացնեն աշակերտին  
ապրած նիւրական աշխարհին ու իր առօրեայ կեանքին հետ կապ  
ունեցող գիտական իւրողութիւններ, որոնք կը պարզուին հիմնը-  
ուելով գիտական մտապատկերներու եւ գաղափարներու վրայ եւ  
որոնք կը համապատասխանեն իր տարիքին ու մտային կարողու-  
թեան: Աշակերտը կը ծանօթանայ ժայլ առ ժայլ իր շրջապատին: Կը  
ներկայացուին բազմաթիւ բնական բներեւոյթներ, որոնք կը բա-  
ցատրուին հետազօտութիւններու եւ փորձերու կատարումով:

Այս հատորին հրատարակութեան առիթով շնորհակալա-  
կան խօսք կ'ուղղեմ.

ա.— Պրճ. Հրաչ Տասնապետեանին, որուն դասագիրքերը  
տասնամեակներ շարունակ իրքեւ ուղեցոյց եւ դասագիրք ծառա-  
յեցին մեր ուսուցիչներուն եւ աշակերտներուն անոնցմէ օգտուե-  
ցայ ինքն ալ այս շարքի պատրաստութեան համար.

բ.— Պրճ. Երուանդ Մոնոֆարեանին, որուն աշխատանքով  
այս 4րդ հատորը լոյս կը տեսնէ իր ամբողջական ու ներկայանալի  
գրքի վիճակին:

գ.— Ազգային Ուսումնական Խորհուրդին եւ Համազգային  
Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչու-  
թեան, որոնք ազնիւ գաղափարը յղացած են հրատարակելու գի-  
տութեան հայերէն դասագիրքերու այս շարքը:

Մ. Զ.